ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն՝
**Հասցե՝** Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
**Հեռ՝** (+37410) 517528; **Էլ. հասցե՝** hartak@sdaoffice.am

## ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի 6–րդ աշխատաժողովի

### ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի նոյեմբերի 21-ին «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնի «Գյուլբենկյան» հանդիպումների սրահում տեղի ունեցավ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի (այսուհետ՝ Հարթակ) 6-րդ աշխատաժողովը, որը նվիրված էր «ՀՀ Բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կառավարման հայեցակարգի» աշխատանքային տարբերակի ներկայացմանն ու քննարկմանը և Ղրղզստանի Հանրապետություն կատարված ուսուցողական այցի ներկայացմանը:

**Աշխատաժողովի օրակարգը՝**

| *Ժամ* | *Թեմա* |
|---|---|
| **14:00 - 14:15** | **Մասնակիցների ժամանում**<br>Գրանցում և սուրճի ընդմիջում |
| 14:15 - 14:30 | **Ողջույնի խոսք** |
| 14:30 - 14:40 | **Օրակարգի ներկայացում**<br>**Նոր գործընկեր կազմակերպության հուշագրի հանձնում**<br>*Վարող՝ Վ. Համբարձումյան, Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ* |
| 14:40 - 15:10 | **Ղրղզստանի Հանրապետության արոտավայրերի կայուն կառավարման փորձի ուսումնասիրման նպատակով կատարված ուսուցողական այցի արդյունքների և քաղած դասերի ներկայացում**<br>*Ներկայացնող՝ Կ. Թորոսյան, ՀԳՌԿՄ – 2*<br>Հարց ու պատասխան |

**ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն՝**
**Հասցե՝** Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
**Հեռ՝** (+37410) 517528; **Էլ. հասցե՝** hartak@sdaoffice.am

| *Ժամ* | *Թեմա* |
|---|---|
| 15:10 - 16:10 | **«ՀՀ Բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կառավարման հայեցակարգի» աշխատանքային տարբերակի ներկայացում**<br>*Ներկայացնող՝ Ե. Հակոբյան, Հղվայզ բիզնես և իրավաբանական խորհրդատվություն ՍՊԸ*<br>Առաջարկություններ, հարց ու պատասխան |
| **16:10 - 16:30** | **Սուրճի ընդմիջում** |
| 16:30 - 17:30 | **Խմբային աշխատանք**<br>Խմբային աշխատանք և արդյունքների ներկայացում<br>*Վարող՝ Հղվայզ բիզնես և իրավաբանական խորհրդատվություն ՍՊԸ* |
| 17:30 - 17:15 | **Հայեցակարգի վերաբերյալ դիտարկումների, առաջարկությունների ամփոփում**<br>*Ներկայացնող՝ Հղվայզ բիզնես և իրավաբանական խորհրդատվություն ՍՊԸ* |
| **17:15 - 18:00** | **Միջոցառման ամփոփում, հետագա քայլերի ներկայացում** |

**Հանդիպման մասնակիցները՝**

1. Քրիստինա Խանոյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
2. Վարսիկ Մարտիրոսյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
3. Անուշ Վերանյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
4. Նարինե Բաբայան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
5. Անահիտ Խեչոյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
6. Լիլյա Հարությունյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
7. Արման Խոջոյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
8. Կարեն Թորոսյան – ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն
9. Աշոտ Գիլոյան – ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
10. Աշոտ Վարդևանյան – ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
11. Մարինա Այդինյան – ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
12. Արմինե Մկրտչյան – ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
13. Մաթևոս Ասատրյան – ՀՀ Ազգային ժողով

14. Աշոտ Հարությունյան – ՀՀ Ազգային ժողով
15. Հարություն Մաթևոսյան – ՀՀ Ազգային ժողով
16. Նորա Ալանակյան – Ավստրիայի զարգացման գործակալություն
17. Գագիկ Խաչատրյան – Սյունիքի մարզպետարան
18. Ներսես Շադունց – Տեղի համայնքապետարան
19. Արմեն Խաչատրյան – Սիսիանի համայնքապետարան
20. Անդրանիկ Հարությունյան – Սիսիանի համայնքապետարան
21. Տաթև Եղիազարյան – Տարածքային զարգացման հիմնադրամ
22. Արմեն Շահբազյան – Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակ
23. Արման Օհանյան – Անասնաբույժների ազգային ասոցիացիա ՀԿ
24. Դավիթ Նավասարդյան – Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն հիմնադրամ
25. Արմեն Ավետիսյան – Տոհմային անասնաբույծների ասոցիացիա ՀԿ
26. Կարինա Հարությունյան – Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ
27. Վիկտորյա Այվազյան – Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ
28. Գագիկ Թովմասյան – Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ, ՀԱԱՀ
29. Վարդան Համբարձումյան – Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ
30. Մարինե Հովակիմյան – Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ
31. Աստղիկ Դանիելյան – Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
32. Քարոլին Վագներ – Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
33. Աղասի Մնացյան – Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն
34. Երանուհի Հակոբյան – Ըդվայզ բիզնես և իրավաբանական խորհրդատվություն ՍՊԸ
35. Լիլիթ Ղարայան – Ըդվայզ բիզնես և իրավաբանական խորհրդատվություն ՍՊԸ
36. Հայկ Մալխասյան – Ըդվայզ բիզնես և իրավաբանական խորհրդատվություն ՍՊԸ
37. Արա Խզմալյան – Ըդվայզ բիզնես և իրավաբանական խորհրդատվություն ՍՊԸ
38. Արևիկ Սարգսյան – Ըդվայզ բիզնես և իրավաբանական խորհրդատվություն ՍՊԸ
39. Մեդա Համազասպյան – թարգմանիչ

Աշխատաժողովին մասնակցեցին ՀՀ Էկոնոմիկայի, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և Շրջակա միջավայրի նախարարությունների, Ազգային ժողովի, ոլորտում գործող պետական, միջազգային, հասարակական և գիտական հաստատությունների ներկայացուցիչներ:

**Վեցերորդ աշխատաժողովի ընթացքում՝**

- ներկայացվեց հարթակի նոր գործընկեր կազմակերպությունը՝ «Անասնաբույժների ազգային ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը,
- ներկայացվեց Ղրղզստանի Հանրապետության արոտավայրերի կայուն կառավարման փորձի ուսումնասիրման նպատակով կատարված ուսուցողական այցի արդյունքները և քաղած դասերը,
- ներկայացվեց ու քննարկվեց ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կառավարման հայեցակարգի» աշխատանքային տարբերակը:

**ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի քարտուղարություն՝**
**Հասցե՝** Հայաստան, 0070, Երևան, Այգեստան թաղամաս, 5-րդ փողոց, 3/1 տուն
**Հեռ՝** (+37410) 517528; **Էլ. հասցե՝** hartak@sdaoffice.am

Միջոցառման սկզբում մասնակիցներին ողջունեցին և բեղմնավոր աշխատանք մաղթեցին ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Տեղական ինքնակառավարման (ՏԻ) քաղաքականության վարչության պետ Աշոտ Գիլոյանը և ՀՀ ԱԺ Տարածքային կառավարման, ՏԻ, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ պատգամավոր Մաթևոս Ասատրյանը և նույն հանձնաժողովի փորձագետ Աշոտ Հարությունյանը: Խոսնակները կարևորեցին Հարթակի գործունեությունը՝ մատնանշելով հատկապես վերջին նախաձեռնությունների՝ այն է Սյունիքի մարզում կենդանիների կանոնակարգված տեղաշարժիկազմակերպման և Բնական կերհանդակների կայուն կառավարման հայեցակարգի մշակման ուղղությամբ տարավող աշխատանքները:

Նոր գործընկեր կազմակերպությունը՝ «Անասնաբույժների ազգային ասոցիացիա» ՀԿ-ն պաշտոնապես ներկայացվեց և նրան հանձնվեց Հարթակին միանալու Հուշագրի օրինակը: Ասոցիացիայի նախագահ՝ Արման Օհանյանը շնորհակալություն հայտնեց Հարթակին միանալու հնարավորության ընձեռման համար, հավելելով, որ մասնագիտական տեսանկյունից կփորձեն հնարավորինս օգտակար լինել Հարթակի

աշխատանքներին:

Հաջորդիվ՝ Հարթակի անունից մասնակիցներին ողջունեց Հարթակի քարտուղարության ներկայացուցիչ Վ. Համբարձումյանը՝ ներկայացնելով հանդիպման օրակարգը և աշխատաժողովի նպատակը:

Կարեն Թորոսյանը (ԷՆ, ՀԳՌԿՄ-2) ներկայացրեց արոտավայրերի կայուն կառավարման փորձի ուսումնասիրման նպատակով, Հարթակի կողմից տարբեր շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների համար կազմակերպված՝ դեպի Ղրղզստանի Հանրապետություն ուսուցողական այցի արդյունքները: Այցի այլ մասնակիցները ևս կիսվեցին իրենց որոշ դիտարկումներով: Աշխատաժողովի մասնակիցները հնարավորություն ունեցան հարցեր ուղղել ներկայացնողին և այցի այլ մասնակիցներին:




«Ռդվայզ» ընկերության ներկայացուցիչ Երանուհի Հակոբյանը ներկայացրեց ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կառավարման հայեցակարգի» աշխատանքային տարբերակը՝ մասնավորպես դրա առաջարկությունների բաժինը: Ներկայացումից հետո տեղի ունեցավ հարց ու պատասխան, քննարկում, որի ընթացքում մասնակիցները բարձրաձայնեցին իրենց նկատառումները և մտահոգությունները:

Աշխատանքային խմբով քննարկումը ծավալվեց ընդլայնված ձևաչափով՝ անդրադառնալով լրացուցիչ մանրամասն քննարկում պահանջող հարցերին և առաջարկություններին:

Հանդիպման արդյունքում մասնակիցները համաձայնության եկան ի գիտություն ընդունել հանդիպման ընթացքում վերհանված առաջարկությունները և ձեռք բերված համաձայնությունները:

## Առաջարկություններ, հանձնարարականներ, եզրակացություններ

| Թեմա | Առաջարկություններ և ձեռք բերված համաձայնություններ, եզրակացություններ |
|---|---|
| Ղրղզստանի Հանրապետության արոտավայրերի կայուն կառավարման փորձի ուսումնասիրման նպատակով կատարված ուսուցողական այցի արդյունքների և քաղած դասերի ներկայացում | • Ղրղզստանի Հանրապետությունում արոտավայրերի կառավարման փորձի տեսանկյունից, մասնավորապես կարևորվեց, որ Ղրղզստանում գործում է բավական լավ օրենսդրական դաշտ, ինստիտուցիոնալ շրջանակ, որոնք նպաստավոր են ոլորտի զարգացման և արդյունավետ կառավարման տեսանկյունից: Բացի այդ՝ առկա են տարբեր դոնոր կառույցների աջակցությամբ ստեղծված ենթակառուցվածքներ և SS գործիքներ, որոնք օգտագործվում են արոտների կառավարման նպատակով:<br>• Այցի ընթացքում քաղված դասերը և ձեռք բերված փորձը հաշվի են առնվում Հայեցակարգի մշակման ընթացքում, ինչպես նաև օգտակար կլինեն տվյալ ոլորտում հետագա աշխատանքների ընթացքում: |
| «ՀՀ Բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կառավարման հայեցակարգի» (Հայեցակարգ) աշխատանքային տարբերակի ներկայացում[1] | • Առաջարկվեց հաշվի առնելով Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվող Գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարությունը՝ աշխատել նախարարության հետ միասին: Արձագանք հնչեց, որ դա արվում է և Ռազմավարության հետ կապված Հարթակի կողմից տրվել են առաջարկություններ և ակնկալվում է, որ դրանք հաշվի կառնվեն Ռազմավարությունը մշակողների կողմից: Առաջարկվեց մշակվող Հայեցակարգը դիտարկել փոխկապակցվածության մեջ Ռազմավարության հետ, նաև որպես վերջինիս բաղկացուցիչ:<br>• Առաջարկվեց մշակված Հայեցակարգում ներառել դրա իրագործման ճանապարհային քարտեզ, ինչը կնպաստի որպես փաստաթուղթ Հայեցակարգի կայացմանը: Բացի այդ, առաջարկվեց Հայեցակարգում ներառված դրույթները, կետերը |

[1] Ներառված են միայն ընդհանուր դիտարկումները և առաջարկությունները:

| | |
|---|---|
| | բաժանել երկու մասի՝ մոտակա ժամանակահատվածում իրականացվող ծրագրեր և երկարաժամկետ իրականացվող ծրագեր՝ իրենց համապատասխան ժամկետներով:<br>• Առաջարկվեց ենթակառուցվածքների բարելավման հետ մեկտեղ նկատի ունենալ նաև էլ. էներգիայի խնդիրը արոտավայրերում:<br>• Արոտավայրի կառավարման սխեմա գծելուց, առաջարկվեց արոտավայրերը գոտիավորել (հորիզոնական)՝ ինչի արդյունքում ՄԵԿ-երը և ԽԵԿ-երը կօգտվեն տարբեր արոտավայրերից:<br>• Առաջարկվեց դիտարկել Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակված «Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգ»-ը և միջոցառումները, որպեսզի հակասություններ և կրկնություններ չլինեն:<br>• Առաջարկվեց Հայեցակարգի ֆորմատը և մեթոդաբանությունը համաձայնեցնել ՀՀ Կառավարության կողմից 2015թ.-ի հունվարի 22-ին հաստատված արձանագրային որոշմանը, որը ներառում է հայեցակարգերի, ռազմավարությունների մշակման մեթոդական ուղեցույց: *(Պարզաբանում՝ Արձանագրային որոշումը ուժը կորցրած է և ներկայումս ՀՀ-ում չկան հայեցակարգերի համար սահմանված ձև)*<br>• Մատնանշվեց, որ Հայեցակարգում անհրաժեշտ է խմբագրել որոշ կառույցների անունները և ներկայացված թվային տվյալները համաձայնեցնել 2019թ.-ի Հողային հաշվեկշռին:<br>• Առաջարկվեց Հայեցակարգում որպես միջոցառում ավելացնել Հարթակի կողմից նախատեսվող կայքը, որտեղ ըստ նախանշված պլանների պետք է երևան ոլորտին առնչվող իրավական ակտերը, կոնվենցիաները և ոլորտում իրականացվող բոլոր ծրագրերը: |

| | |
|---|---|
| | • Քննարկվեց և համաձայնեցվեց, որ հաստատման և օգտագործման տեսանկյունից ավելի հարմար է ունենալ ոչ թե առանձին օրենք արոտավայրերի վերաբերյալ, այլ համապատասխան լրացումներ և հավելումներ ներառել Հողային օրենսգրքում:<br>• Առաջարկվեց նախքան Հայեցակարգի վերջնականացումը, փաստաթուղթը ևս մեկ անգամ շրջանառել ախատանքային խմբին, ապա նաև համապատասխան նախարարություններին, մարզպետարաններին: |

Աշխատաժողովի ավարտին ամփոփիչ խոսքով հանդես եկավ Աստղիկ Դանիելյանը (ԳՄՀԸ), ով շնորհակալություն հայտնեց բոլորին արդյունավետ քննարկման համար: Նա նշեց, որ ևս մեկ անգամ քննարկման արդյունքների և ստացված առաջարկությունների, դիտարկումների հիման վրա վերջնական տեսքի կբերվի փաստաթուղթը և կտրամադրվի համապատասխան կառույցներին՝ կարծիքի համար: Փաստաթղթի վերջնական տարբերակի համաձայնեցումից հետո կձեռնարկվեն համապատասխան քայլեր Հարթակի և գործընկեր կառույցների կողմից որպեսզի փաստաթուղթն ամրագրվի և օգտագործվի ոլորտի արդյունավետ կանոնակարգման և զարգացման համար:

Համակարգման հարթակի վեցերորդ աշխատաժողովի վերաբերյալ անդրադարձ է հրապարակվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական էջում՝ https://mineconomy.am/news/1915, Ռազմավարական Զարգացման Գործակալություն ՀԿ-ի կայքում՝ https://sda.am/index.php?id=89 և հետևյալ լրատվական կայքերում՝ https://armenpress.am/arm/news/996227.html, https://news.am/arm/news/545931.html,

https://cutt.ly/1eBpVaH, https://cutt.ly/QeBpMvg:

Հանդիպման ընթացքից որոշ նկարներ մինչև ս.թ. դեկտեմբերի 15-ը կարող եք բեռնել հետևյալ հղմամբ՝ https://drive.google.com/open?id=1WXnaZtpSQgQForfXPSNG0YqRCRlfJ1of: